Արաճանուոյ ձախ կողմը

	Տունք հայ	Տունք քուրդ		Տունք հայ	Տունք քուրդ
Ղօթանլու	40	30	Ակներ	15	15
Ռստամ կիտուկ	100	8	Եքմալ	15	
Տէրբք	60	10	Բեագրան	5	5
Խան օղլի	30	5	Մանազկերտ	70	700
Թունտրաս [1]	30	120	Մարմուս	50	30
Օխչին [2]	15	40	Ղարաղայա	30	10
Սուլտուզ [3]	10	15	Տոլաղբաշ	20	6

---

1. Թոնդրակեցոց ընակութեան վայրը՝ այս գիւղի վերան անէծք կայ. կասէ հայ ժողովուրդն, սորա մօտերն կայ եղեգնուտ մի, 1860 թուականներուն մի արջ կը հալածեն գիւղացիք, արջը կընկնի կամիջի մօտ մի խոր տեղ, միջոց մի կանգայտանայ, քիչ յետոյ արջը արենաթաթախ դուրս կգայ, ուստի քիչ վերջ ջուրը արեամբ կը ներկուի, ջրի երեսն կը տեսնուի մի ահագին ծուկ, որ արջն կըլլած էր եւ արջը ձկան փորը պատառելով դուրս ելած էր:

2. Օխչին անտառապատ մի վայր եկեղեցի մի կայր, կասեն, վաճառականը բեռներով եկաւ, տեսաւ որ ծառներն ողջոյն կտան, բեռներն թափեց, մտաւ եկեղեցի, տեսաւ ողջունի ժամանակ է, հետեւեալ օր քահանային ասաց թէ այնպիսի պատարագ պիտի անես, որ ծառներն ողջոյն տան, եւ ասաց թէ իւր երկու ջորին պիտի տայ:

Քահանայն պատարագի մէջ մտածեց թէ վաճառականը ջորին բեռներով արդեօք պիտի տայ, երկմտեցաւ եւ վաճառականը տեսաւ որ ծառներն ողջոյն չը տուին, տերեւ մի անգամ չը շարժեցաւ. պատճառը քահանային հարցուց. քահանայն խոստովանեցաւ, վաճառականը եօթ ջորի տուաւ բեռներով, քահանայն պատարագեց, ողջունի միջոցին ծառներն խոնարհեցան, միմեանց ողջոյն տուին, որով այս գիւղը Օխչին (ողջոյն) կոչուեցաւ:

3. Այստեղ է Ամենափրկչի եկեղեցին: